ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ
ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
MINISTRY OF FOREIGN AFFAIRS
OF THE REPUBLIC OF ARMENIA

1111/ 04048

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունն իր խորին հարգանքն է հավաստում Հայաստանի Հանրապետությունում Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանությանը և պատիվ ունի հայտնել, որ 2018թ. փետրվարի 12-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Ամերիկայի Միացյալ Նահանգների միջև «Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի» կիրարկմանն օժանդակելու համագործակցության մասին» համաձայնագրի տեքստում առկա են տեխնիկական վրիպակներ:

Հայկական կողմն առաջարկում է կատարել հետևյալ ուղղումները.

- Հոդված 4-ի 3-րդ պարբերության «Հոդված 7-ով» բառերը հայերեն տեքստում փոխարինել «Հոդված 6-ով» բառերով, անգլերեն տեքստում Հոդված 4-ի 3-րդ պարբերության ''Article 7'' բառերը փոխարինել ''Article 6'' բառերով,
- Հոդված 8-ի 1-ին պարբերության «Հոդված 7-ի» բառերը հայերեն տեքստում փոխարինել «Հոդված 6-ի» բառերով, անգլերեն տեքստում Հոդված 8-ի 1-ին պարբերության ''Article 7'' բառերը փոխարինել ''Article 6'' բառերով,
- Հոդված 8-ի 2-րդ պարբերության «Հոդված 11-ի» բառերը հայերեն տեքստում փոխարինել «Հոդված 10-ի» բառերով, անգլերեն տեքստում Հոդված 8-ի 2-րդ պարբերության ''Article 11'' բառերը փոխարինել ''Article 10'' բառերով,
- Հոդված 10-ի 3-րդ պարբերության «Հոդված 8-ի» բառերը հայերեն տեքստում փոխարինել «Հոդված 7-ի» բառերով, անգլերեն տեքստում Հոդված 10-ի 3-րդ պարբերության ''Article 8'' բառերը փոխարինել ''Article 7' բառերով:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ԴԵՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ

Ամերիկյան կողմից վերոնշյալ ուղղումները կատարելու համաձայնության դեպքում, Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունն առաջարկում է սույն հայտագիրը և ամերիկյան կողմի պատասխան հայտագիրը համարել Համաձայնագրի անբաժանելի մաս, համաձայն 1969թ. մայիսի 23-ին ստորագրված «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» Վիեննայի կոնվենցիայի 79-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետի:

Օգտվելով առիթից՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը վերստին իր խորին հարգանքն է հավաստում Հայաստանի Հանրապետությունում Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանությանը:

Երևան, 23 ապրիլի 2019թ.